



ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական հետազոտության արդյունքների ներդրումը,
մեթոդական հանձնարարականների մշակումը/ակտիվ մեթոդներ/

Առարկա՝ Պատմություն

Կատարող՝ Աննա Մարտիրոսյան

Ղեկավար՝ Նարինե Վասիլյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Գրականության ակնարկ.....	4-5
Գործնական համատեքստ. Մանկավարժական հետազոտության արդյունքների ներդրումը, մեթոդական հանձնարարականների մշակումը/ակտիվ մեթոդներ/ ---	6-12
Ժամանակակից մանկավարժական մոտեցումները -----	13-15
Մանկավարժական նախագիծ.....	16-17
Եզրակացություն -----	18
Գրականության ցանկ.....	19

Ներածություն

Հասարակական կյանքի անբաժանելի մաս հանդիսացող կրթությունը բոլոր դարաշրջաններում ուղղված է եղել հասարակության պահանջների բավարարմանը: Կրթության նպատակը մանկավարժության մեջ միշտ եղել է անփոփոխ՝ աճող սերունդը նախապատրաստել կյանքին, ձևավորել տվյալ ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք, ակտիվ անդամներ, իսկ կրթության խնդիրներն անընդհատ փոփոխվել են՝ պայմանավորված նոր հասարակական պահանջների ձևավորմամբ, տվյալ հասարակության տնտեսական, գիտական, մշակութային զարգացմամբ: Արդի մանկավարժական որոնումները նպատակ ունեն ուսուցման գործընթացը դարձնել այնպիսին, որ սովորողները դառնան այդ գործընթացի ակտիվ մասնակիցները, որ նրանց պասսիվ ունկնդրողի դերը փոփոխվի ակտիվ մասնակցի դերով: Դրա շնորհիվ աշակերտները դառնում են առավել անկաշկանդ ու ինքնուրույն, նրանց մոտ ձևավորվում են ուսման դրական դրդապատճառներ, ճանաչողական հետաքրքրություններ ու կարողություններ: Սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Ճանաչողությունը մարդկային մտածողության մեջ իրականության արտացոլման ու վերարտադրման գործընթաց է, որն ապահովում է ճշմարտության իմացում, գիտելիքների ձեռք բերում, յուրացում, ցանկացած կատարած աշխատանքում ստեղծագործական մոտեցում: Վերը նշված կարևորագույն խնդիրների լուծման նպատակով ժամանակակից մանկավարժության մեջ կիրառվում են բազմաթիվ մանկավարժական տեխնոլոգիաներ: Ուսուցման գործընթացի կատարելագործմանը, սովորողների ակտիվացմանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը մեծապես նպաստում է մանկավարժական տեխնոլոգիաների շարքում իր ուրույն տեղն ունեցող քննադատական մտածողության տեխնոլոգիան: Այն առավել հայտնի է «Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով» ծրագրի շրջանակներում: Քննադատական մտածողության ձևավորման ու զարգացման հիմնախնդիրները դիտարկել են 20-րդ դարի վերջերին ԱՄՆ-ի հոգեբան-մանկավարժներ Ջ.Լ.Սթիլը, Ք.Ս.Մերեդիթը, Չ.Թեմփլը, ինչպես նաև Բ.Բլումը, Ղ.Հուսլպերնը, Ղ.Քլուսթերը և ուրիշներ: Քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառման խնդիրներին ու արդյունավետությանը ավելի ուշ անդրադարձել են ժամանակակից մանկավարժներ Գ.Սելեվկոն, Ի.Չագաշևը, Յ Ս.Չաիր-Բեկը, Ի.Մուշտավինսկայան, Մ.Կլարինը, Վ.Կուկուշինը, Վ.Միժերիկովը և այլք: Քննադատական մտածողության տեխնոլոգիան՝ որպես կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների ձևավորման ու զարգացման միջոց դեռևս չի ենթարկվել ամբողջական գիտամանկավարժական ուսումնասիրման ու վերլուծության: Քննադատական մտածողության տեխնոլոգիան, լինելով ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիա, ունի բավականին հին արմատներ: Այն միավորել ու իր մեջ է ամփոփել մի շարք մանկավարժական տեխնոլոգիաների /պրոբլեմային ուսուցման, կոլեկտիվ ուսուցման, խաղային ուսուցման տեխնոլոգիաների/ արդյունավետ, արդիական ու նշանակալի կողմերը՝ դառնալով

առավել ընդգրկուն ու ժամանակի պահանջներին համահունչ: Ատենախոսության շրջանակներում քննադատական մտածողության տեխնոլոգիան ուսումնասիրվել է կրտսեր դպրոցականների ճանաչողական կարողությունների զարգացման տեսանկյունից՝ ապահովելով նպաստավոր մանկավարժական պայմաններ սովորողների բնականոն զարգացման համար: Քննադատական մտածողության տեխնոլոգիան դիտարկվել է նաև որպես ակտիվ և ադապտիվ մանկավարժական տեխնոլոգիա, քանի որ դրա կիրառումը հնարավորություն է տալիս սովորողներին լինել ուսուցման գործընթացի ակտիվ մասնակից: Տարրական դպրոցում քննադատական մտածողության տեխնոլոգիայի կիրառումը կրում է որոշակի փոփոխություններ, շատ մեթոդներ վերափոխվում են՝ համապատասխանեցվելով կրտսեր դպրոցականների տարիքային ու անհատական առանձնահատկություններին:

Մանկավարժական հետազոտության արդյունքների ներդրումը, մեթոդական հանձնարարականների մշակումը/ակտիվ մեթոդներ/

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը, դասախոսությունը:

Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել ուսանողի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում¹: Օրինակ,

¹ Ասատրյան Լ., Հակոբյան Գ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, Ե., 2011 թ., 178 էջ:

կոնկրետ իրավիճակների վերլուծությունը կարող է ունենալ ուսուցման երեք նպատակ.

- Համախմբել դասախոսության ընթացքում ձեռք բերված նոր գիտելիքները,
- Կատարելագործել արդեն ձեռք բերած մասնագիտական հմտությունները,
- Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ ուսանողների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում:

Այսպիսով, ակտիվ ուսուցման մեթոդներ նշանակում է ուսուցում գործունեության մեջ: Լ.Ս.Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և ուսանողների միջև, այնպես էլ իրենց, ուսանողների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է ուսանողների խոսքը: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է ուսանողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել ուսանողների կողմից ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն): Ակտիվ մեթոդները զուգակցվում են իյուստրատիվ մեթոդների հետ, կատարվում են մեխանիզմների, մոդելների, զծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, սլայդների, հետաքրքիր նյութերի ցուցադրություններ:

Մարդը շրջապատող միջավայրը ընկալում է իր 5 զգայարաններով: Մակայն տեղեկատվության ընկալման գլխավոր դերը կատարում են աչքերը: Մարդու

կարողությունները չափազանց սահմանափակվում են այդ զգայարանի բացակայության դեպքում: Այդ պատճառով էլ ուսումնական գործընթացներում կարևոր տեղ է հատկացվում տեսողականացմանը: Տեղեկատվությունը և ուսումնական բովանդակությունը միշտ պետք է ներայացվեն ընկալման տեսողական ծավալների հաշվառմամբ, աչքերին՝ թողնելով առավել էական առարկաներն ու երևույթները: Տեսողականացման տակ մենք հասկանում ենք տեղեկատվության կամ ուսումնական բովանդակության պատկերազարդումը ակներև պատկերների միջոցով: Հետևաբար տեսողականացումը պատկերազարդման մեթոդ է, ինչպես նաև միջոց: Պատկերազարդման այլ հնարավորություններ են մոդելների ներկայացումը, գործընթացի ցուցադրումը, առարկաների գործածումը:

Ցուցադրությունը (դեմոնստրացիա) ուսումնառողներին՝ երևույթներին, գործընթացներին, օբյեկտներին բնական վիճակում զննական-զգայական ձևով ծանոթացնելն է²: Պատկերազարդումը (իլյուստրացիա) ենթադրում է առարկաների, երևույթների ցուցադրումն ու ընկալումը դրանց սիմվոլիկ պատկերներով: Այս մեթոդի անվանման հիմքը անգլ. action- փոխազդեցությունն է: Սկզբնական շրջանում այսպես էր անվանվում ուսումնական պարապմունքների մի որոշակի տարբերակ, որն աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավեճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և տվյալ հարցի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ հնարավորություններ էր տալիս: Հետագայում ավելի տարածվեց «ինտերակտիվ մեթոդներ» բառակապակցությունը, որը ներառում էր վերոհիշյալ հնարավորություններով դրսևորվող ուսումնական պարապմունքների կազմակերպման մի շարք համանման տարբերակներ:

² Краевский, В. В. Методология педагогического исследования: Пособие для педагога-исследователя / В. В. Краевский. - Самара, 1994.

Իհարկե, ցանկացած սոցիալական գործընթաց մարդկանց փոխազդեցություն է: Մասնավորապես՝ ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է: Սակայն ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորվում է այդ փոխազդեցության կառուցվածքով, ձևերով ու բովանդակությամբ: Դաս-դասարանային համակարգի ուսուցման գործընթացի կառուցվածքային հիմքում դրված է փոխազդեցության ուսուցիչ-աշակերտական խումբ ձևը: Սա է պատճառը, որ ուսումնական պարապմունքները կազմակերպվում են ընդհանուր ճակատով, այսինքն՝ աշխատանքի յուրաքանչյուր պահին բոլոր աշակերտները զբաղված են միևնույն խնդրով, աշխատում են միևնույն ձևով, տվյալ խնդրի կատարման համար բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը: Նման տեսակի ուսումնական պարապմունքները մենք անվանում ենք խմբային: Խմբային պարապմունքների բավական լուրջ պրոբլեմներից մեկ այն է, որ ուսումնական խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է հայտնվում³: Սրա հաղթահարման ուղիներից մեկն աշակերտների միջև արդյունավետ փոխազդեցության կազմակերպումն է, ինչն էլ հենց հանդիսանում է ինտերակտիվ մեթոդի հիմնական գաղափարը: Սակայն խմբային ուսուցման պայմաններում աշակերտների միջև փոխազդեցություն կազմակերպելու հնարավորությունները սահմանափակ են: Այստեղ հիմնականում օգտագործվում են ենթախմբային կամ համախմբային քննարկումների տարբեր հնարքներ ու մեթոդներ, որոնք բավական արդյունավետ են կարծիքների ձևավորման, փոխանակման, ընդհանուր մոտեցումների մշակման համար: Եթե երեխայի գործունեության առաջնային և ցանկալի ձևը համարվում է խաղը, ապա ուսուցման կազմակերպման համար պետք է օգտագործեն գործունեության այս ձևը՝ համատեղելով խաղը և ուսումնական գործընթացը, ավելի ճիշտ, օգտագործել խաղային գործունեությունը կրթական նպատակներին հասնելու

³ Краевский, В. В. Методология педагогического исследования: Пособие для педагога-исследователя / В. В. Краевский. - Самара, 1994.

համար: Այս դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական ծրագրի ավելի արդյունավետ իրագործմանը: Բարձր դրական մոտիվացիան կարող է լրացնող գործոն հանդիսանալ սովորողների ոչ բավարար բարձր ունակությունների ժամանակ, բայց հակառակ ուղղությամբ այդ սկզբունքը չի աշխատում՝ ոչ մի կարողություն չի կարող փոխհատուցել մոտիվացիայի բացակայությունը, և ապահովել ուսուցման էական առաջընթաց: Բնական խաղային միջավայրում, որտեղ չկա պարտադրանք, և կա հնարավորություն յուրաքանչյուր երեխայի համար գտնել իր տեղը, ունենալ նախաձեռնություն և անկախություն, ազատ իրականացնելու իրենց կարողությունները և կրթական կարիքները, հանդիսանում է ուսումնական նպատակներին հասնելու օպտիմալ տարբերակ: ԵՎ կրթական գործընթացում ուսուցման ակտիվ մեթոդների ներառումը թույլ է տալիս ստեղծել այդպիսի միջավայր՝ ինչպես դասարանում, այնպես էլ արտադպրոցական միջոցառումների ժամանակ:

Կան ուսուցման ակտիվ մեթոդների տարբեր դասակարգումներ: Սա պայմանավորված է նրանով, որ դեռ չկա ակտիվ մեթոդների համընդհանուր ընդունված սահմանում: Այսպիսով, երբեմն ԱՈԻՄ հասկացությունը ընդարձակում են՝ դրանց թվին դասելով ուսուցման ժամանակակից այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ ինտերակտիվ սեմինարը, թրենինգները, պրոբլեմային ուսուցումը, ուսուցում համագործակցությամբ, ուսուցողական խաղեր և այլն⁴: Կոնկրետացնելով, դրանք ամբողջական կրթական միջոցառման, կամ էլ առարկայական ցիկլի կազմակերպման ձևեր են, չնայած, իհարկե, այդ ուսուցման ձևերի սկզբունքները կարող են օգտագործվել դասի առանձին մասերը անցկացնելու համար:

Ակտիվ ուսուցման մեթոդները – մեթոդներ են, որոնք նպաստում են սովորողների ճանաչողական գործունեությունը: Կառուցված են հիմնականում երկխոսության վրա,

⁴ Образцова П. И. Методы и методология психологопедагогического исследования: Учебное пособие. Серия Краткий курс,-Сбп.: ИД Питер, 2004г.,268ст:

որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: ԱՌԻՄ-ը բնութագրվում է ուսանողների ակտիվության բարձր մակարդակով: Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական-արտադրական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորությունները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից: ԱՌԻՄ-ը – մեթոդներ են, որոնք մատուցվող կրթական նյութերի յուրացման գործընթացում ապահովում են ուսանողների ակտիվությունը, մտածական և պրակտիկ գործունեության բազմազանությունը: ՌԻԱՄ-ը հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, ուսանողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա: ՌԻԱՄ-ի կրառամաբ ուսուցման գործընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա: Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

- ՌԻ-սումնական դրական խթանի ձևավորում,
- ՌԻ-սանողների ճանաչողական ակտիվության բարձրացում.
- Կրթական գործընթացին ուսանողների ակտիվ ներգրավում.
- Ինքնագործունեության խթանում,
- Ճանաչողական գործընթացների զարգացում - խոսք, հիշողություն, մտածողություն
- Ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում,
- Ստեղծագործական մտածելակերպի զարգացում,
- Սովորողի անհատական հաղորդակցական-զգայական ոլորտի զարգացում,

- Սովորողի անհատական-յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում,
- Ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

Ակտիվ ուսուցումը ուսուցիչների և աշակերտների միջև փոխգործակցություն է, որտեղ ուսուցիչները և աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ, և սովորողները այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձը ուսուցիչն էր, ապա այստեղ ուսուցիչ-աշակերտ փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա են՝ սուբյեկտ սուբյեկտային փոխհարաբերություններ: Պասիվ ուսուցումը ենթադրում է ուսուցում ավտորիտար ոճով, իսկ ակտիվ ուսուցումը ժողովրդավարական ոճով:

Երեխայի մտավոր-ստեղծագործական ներուժի զարգացման շատ ձևեր կան, սակայն անվիճելի է, որ ամենաարդյունավետ ձևերից մեկը հետազոտելու սեփական փորձն է: Հատուկ պարապմունքների ժամանակ մանկակական խաղերով ձևավորված հետազական ունակություններն ու հմտությունները հեշտորեն ներարկվում են և փոխանցվում հետագա գործունեության բոլոր ձևերին: Կարևոր է հիշել նաև, որ ամենաարժեքավոր և խոր գիտելիքները նրանք են, որ սեփական ստեղծագործական փնտրտուքի ընթացքում ինքնուրույն են ձեռք բերվում, և ոչ թե նրանք, որ սերտելու միջոցով են յուրացվում:

Մտածողության հոգեբանության մասնագետները վաղուց են նշել այն առանձնահատկությունը, որ «դարակազմիկ» գյուտ անող գիտնականի և նոր բան բացահայտող երեխայի մտքի աշխատանքը իրենց ներքին «մեխանիկայով» համարժեք են: Սակայն ամենակարևորն այն է, որ գիտնականի նման գործելով (սեփական հետազոտություններն անցկացնելով, փորձեր դնելով)՝ նոր գիտություն յուրացնելը երեխայի համար ավելի հեշտ է, քան «պատրաստի տեսքով» ինչ-որ մեկի հայտնագործած գիտելիքները վերցնելը: Հետազոտությունների նկատմամբ հակումը հատուկ է բացառապես բոլոր երեխաներին, սակայն օժտված երեխաներին ավելի

բնորոշ է: Նոր տպավորությունների անհագ ծարավը, հետաքրքրասիրությունը, փորձ անելու մշտական ձգտումը, ճշմարտությունն ինքնուրույն որոնելը ավանդաբար դիտարկվում են որպես մանկան օժտվածության ցուցիչներ:


Ժամանակակից մանկավարժական մոտեցումները

Արդեն մի քանի հարյուրամյակների պատմություն ունի ուսուցման կազմակերպման, այսպես կոչված, խմբային եղանակը, որն իր պատմական զարգացման ընթացքում կայացել ու ամրապնդվել է երկու հիմնական տարատեսակներով՝ դասասարանային և դասախոսություն-սեմինարային: Սակայն այս եղանակին բնորոշ են մի շարք էական սահմանափակումներ, որոնցից հատկապես նշմարելի է ուսուցման գործընթացում ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի գործուն ընդգրկվածության ապահովման պրոբլեմը⁵: Այս պրոբլեմի հաղթահարման փորձերը բազմաթիվ մեթոդական մշակումների և մանկավարժական նորարարությունների առիթ են հանդիսացել: Մանկավարժական պրակտիկայի մեթոդական բազմազանությունը, մանկավարժական տեսության հայեցակարգային ու տերմինաբանական գերհագեցվածությունը ստեղծում են մասնագիտական կողմնորոշման բավականին լուրջ դժվարություններ: Ինտերակտիվ մեթոդներ Որոշակի խառնաշփոթ է ստեղծված, այսպես կոչված, «ուսուցման ինտերակտիվ մեթոդ» հասկացության առիթով: Այս մեթոդի անվանման հիմքը անգլերեն *interaction*՝ փոխազդեցություն բառն է: Սկզբնական շրջանում այսպես էր անվանվում ուսումնական պարապմունքների մի որոշակի տարբերակ, որն աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավիճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և տվյալ հարցի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ հնարավորություններ էր

⁵ .Образцова П. И. Методы и методология психологопедагогического исследования:

Учебное пособие.Серия Краткий курс,-Сбп.: ИД Питер, 2004г.,268ст:

տալիս: Հետագայում ավելի տարածվեց «ինտերակտիվ մեթոդներ» բառակապակցությունը, որը ներառում էր վերոհիշյալ հնարավորություններով դրսևորվող ուսումնական պարապմունքների կազմակերպման մի շարք համանման տարբերակներ: Ներկայումս, հատկապես Հայաստանում, ընդունված է ինտերակտիվ մեթոդի տարատեսակ համարել այն տարբերակները, որոնք հիմնված են ուսումնական պարապմունքների կազմակերպման հետևյալ կառուցվածքաձևի վրա



Փոխազդեցությունը խմբային ուսուցման պայմաններում

Իհարկե, ցանկացած սոցիալական գործընթաց մարդկանց փոխազդեցություն է: Մասնավորապես՝ ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է: Սակայն ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորվում է այդ փոխազդեցության կառուցվածքով, ձևերով ու բովանդակությամբ: Օրինակ՝ դաս-դասարանային համակարգի ուսուցման գործընթացի կառուցվածքային հիմքում դրված է փոխազդեցության ուսուցիչ-աշակերտական խումբ ձևը: Սա է պատճառը, որ ուսումնական պարապմունքները կազմակերպվում են ընդհանուր ճակատով, այսինքն՝ աշխատանքի յուրաքանչյուր

պահին բոլոր աշակերտները զբաղված են միևնույն խնդրով, աշխատում են միևնույն ձևով, տվյալ խնդրի կատարման համար բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը: Նման տեսակի ուսումնական պարապմունքները մենք անվանում ենք խմբային: Խմբային պարապմունքների բավական լուրջ պրոբլեմներից մեկ այն է, որ ուսումնական խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է հայտնվում: Սրա հաղթահարման ուղիներից մեկն աշակերտների միջև արդյունավետ փոխազդեցության կազմակերպումն է, ինչն էլ հենց հանդի- սանում է ինտերակտիվ մեթոդի հիմնական գաղափարը:

Մակայն խմբային ուսուցման պայմաններում աշակերտների միջև փոխազդեցություն կազմակերպելու հնարավորությունները սահմանափակ են: Այստեղ հիմնականում օգտագործվում են ենթախմբային կամ համա- խմբային քննարկումների տարբեր հնարքներ ու մեթոդներ, որոնք բավա- կան արդյունավետ են կարծիքների ձևավորման, փոխանակման, ընդհա- նուր մոտեցումների մշակման համար:

Մանկավարժական նախագիծ

Բարդ, հիմնականում առօրյա կյանքին առնչվող խնդիր, խնդիրն ուսումնասիրելուն վերաբերող նպատակների և առաջադրանքների սահմանում, աշխատանքային գործընթացի կազմակերպում և արդյունքների կանխատեսում, արդյունքների ներկայացում.

Մանկավարժական նախագծային մեթոդն ուսման հատուկ եղանակ է, որը կենտրոնանում է որևէ խնդրի շուրջ:

Առաջադրանքը ոչ միայն խնդիրը լուծելը կամ այն ընտրելն է, այլև դրան իրական կյանքում սերտորեն փոխկապակցված հնարավորինս շատ հայեցակետեր բացահայտելն է: Յուրաքանչյուր նախագիծ յուրօրինակ և անվերջ է, քանի որ

խնդիրները վերացական հասկացություններ չեն, այլ վերցված են իրականությունից: Չկա երկու նմանատիպ նախագիծ, քանի որ մասնակից աշակերտները, ուսուցիչները և հանգամանքները մշտապես տարբեր են:

Նախագծային մեթոդը պահանջում է աշակերտների աշխատանքի գիտակցված ծրագրում: Ծրագրումը կատարվում է երկու տարբեր մակարդակներով: Առաջին մակարդակը վերաբերում է ամբողջ գործընթացին, որի ընթացքում նախատեսվում է, որ աշակերտին կներկայացվեն որոշակի գիտելիքներ և կզարգացվեն որոշակի կարողություններ: Երկրորդ մակարդակը ենթադրում է անհատական նախագծերի ծրագրում, որի համար անհրաժեշտ է ուսուցչի կողմից շահագրգռվածություն և օժանդակության ցուցաբերում: Անհրաժեշտ է նշել, որ այս դեպքում խոսքի հմտությունները գերիշխող չեն, և տարբեր կարողություններ ունեցող աշակերտներ հավասարապես մասնակցում են համատեղ ընտրված խնդրի լուծմանը:

Թեև ուսուցիչները և աշակերտները շարունակում են տարբեր դերակատարում ունենալ, այս մեթոդի աշխատանքների իրականացման համագործակցային բնույթն ապահովվում է նրանով, որ ուսուցչի ղեկավարման դերն աննշան է, նա գործում է գրեթե աննկատ, իսկ համագործակցությունն իրականացվում է միայն համատեղ պլանավորման, գործողությունների և գնահատման միջոցով:

Առաջադրանքների բազմազանությունն աշակերտներին հնարավորություն է տալիս դրանց մասնակցելու տարբեր ձևերով: Աշակերտները կարող են աշխատանքի իրենց բաժինն ընտրել ըստ իրենց նախկին փորձի, ունակությունների և հավակնությունների՝ առանց ուսուցչի կողմից որևէ մեթոդաբանության կիրառման: Այս նախագծային մեթոդն առաջարկում է ավելին, քան ավանդական կրթության և դպրոցի շրջանակը: Այն կենտրոնանում է առօրյա կյանքի խնդիրների վրա և կարևորում մասնակիցների փորձառությունը:

Նախագծի աշխատանքային գործընթացը՝

ա) թեմաներ ընտրելը և դրանք քննարկելը,

բ) ենթաթեմաներ ընտրելը և հանձնարարելը (կազմակերպվում է ուսուցչի կողմից կամ ընդհանուր համաձայնությամբ),

գ) հաղորդակցման ուղիներ ընտրելը (էլ. փոստ, ֆորում),

դ) հաղորդակցման ռազմավարություն մշակելը (տեղեկությունների փոխանցման պարբերականությունը, աշակերտներին հանձնարարված մասերի վերաբերյալ զեկույցների ստուգման վերջնաժամկետները),

ե) խմբերում փոքր թեմաները քննարկելը և ներկայացնելը,

զ) ներկայացումներն ըստ խմբերի պատրաստելը. փոքր թեմաների մասին զեկույցներն «իրար միացնելը»,

է) խմբերի ներկայացումները,

ը) դիտողությունները, գնահատումը.

– գնահատում խմբերում՝ աշակերտներին հանձնարարված թեմայի մասերը,

– գնահատումը դասարանում՝ խմբերի ներկայացումների գնահատումը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ելնելով վերը նշվածից, կարելի է գալ հետևյալ համոզմանը, որ մանկավարժական հետազոտությունների իրականացման գործընթացում, շատ կարևոր է մեթոդաբանական գիտելիքների իմացությունը: Այն հնարավորություն է տալիս ուսուցչին, դասը ավելի արդյունավետ կազմակերպել: Կիրառելով զանազան մեթոդներ, ուսուցիչը կարող է երեխաների համար տվյալ դասը առավել բազմաբովանդակ դարձնել: Բնականաբար լավ կազմակերպված դասն էլ ինքնին խոսում է կրթության որակի բարձրացման մասին: Ներկայումս, ինչպես գիտենք կրթության ոլորտում տեղի են, ունենում ինովացիոն գործընթացներ, որոնք նույնպես, նպատակաուղղված են, արդյունավետ կրթության կազմակերպմանը:

Առհասարակ, ներկայիս ուսուցումը կազմակերպվում է այնպես, որ այն դառնա աշակերտակենտրոն: Այսինքն, երեխան պետք է կարողանա, դուրս գալ պրոբլեմային իրավիճակից, առաջադրված խնդիրները հաղթահարի:

Գրականության ցանկ

1. Ասատրյան Լ., Հակոբյան Գ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, Ե., 2011 թ., 178 էջ:
2. Краевский, В. В. Методология педагогического исследования: Пособие для педагога-исследователя / В. В. Краевский. - Самара, 1994.
3. Образцова П. И. Методы и методология психологопедагогического исследования: Учебное пособие. Серия Краткий курс,-Сбп.: ИД Питер, 2004г.,268ст: